Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3-183

# ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՅԵՐԳԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ • ԳԵՂՀՐԱՏՐԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1932

784
Պ-62

784.617

ԲԵ-2008

# ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՅԵՐԳԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԿԱԶՄԵՑԻՆ
Կ. ՋԱՔԱՐՅԱՆ ՅԵՎ Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ • ԳԵՂՀՐԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1932

(5676)

## ՑԱՆԿ


էջ

1. Կարմիր բանակին . . . . . . . . . . . 3
2. Յերիտասարդ գվարդիա . . . . . . . . 4
3. Կարմիր հոկտեմբեր . . . . . . . . . . 5
4. Շախտերում . . . . . . . . . . . . . 6
5. Նոյեմբերին . . . . . . . . . . . . . 7
6. Պիոներական քայլերգ № 1 . . . . . . . 8
7. Պիոներիա . . . . . . . . . . . . . . 9
8. Պիոներական քայլերգ № 2 . . . . . . . 10
9. Պիոներական . . . . . . . . . . . . . 11
10. Հնգամյակի քայլերգ . . . . . . . . . 12
11. Ին մատրոս տղա . . . . . . . . . . 13
12. Մ ա յ ի ս . . . . . . . . . . . . . 14
13. Բերքի յերգը . . . . . . . . . . . . 15
14. Նորից գարուն . . . . . . . . . . . 16



Գրադարան
593-2008



Սրբագրիչներ՝ Հ. Սարիկյան, Ե. Հարությունյան

Պետհրատի տպարան Պատվեր № 3207 Գլավլիտ 7614 (բ·) Հրատ. № 2336 Տիրաժ 1000



18862


# ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ


Խոսք՝ ԽԱՉԻԿ ՀՐԱՉՅԱՆԻ

Երաժշտ. ԿԱՐՈ ԶԱՔԱՐՅԱՆԻ


Աշխույժ




I ձայն Պայքարի այս մեծ որերին, հե՛յ,
Շատ ես տարել հաղթանակներ մեծ-մեծ,
Ալ դրոշ և ամուր պահած ձեռքիդ,
II ձայն Յեղել ես, կլինես պայքարներում
Միշտ հաղթանակող:

Պատրաստվել ես քո մեծ գրոհին, հե՛յ,
Միշտ յեղել ես վառ դիրքերում կանգնած,
Մեր պայքարի այն որերում միշտ
Տարել ես, կտանես ենտուզիազմով
Շատ հաղթանակներ:

# ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՎԱՐԴԻԱ

Խոսք՝ Ա. ՎՇՏՈՒՆՈՒ  Յերաժշտ. ԿԱՐՈ ԶԱՔԱՐՅԱՆԻ

Քայլերգ



Մէկ, յերկու, մէկ.
Մենք միշտ յեղել ենք կուռ,
Յեվ կանք մենք.
Հին դարերի ճամբով յեկանք,
Տանք մենք լույս, տանք մենք լույս,
Տանք մենք նոր լույս, տանք մենք նոր լույս,
Տանք մենք նոր լույս։

Դեհ, առաջ, միշտ առաջ,
Հաղթենք մենք,
Շատ բռնության գլխին լախտ ենք,
Բախտ ենք մենք, բախտ ենք մենք,
Բախտ ենք, լախտ ենք, բախտ ենք, լախտ ենք,
Բախտ ենք, լախտ ենք։

Մենք հզոր ենք, հուր ենք,
Ջահել, վառ,
Դեպ վեր ենք բռնել մենք ջահեր վառ,
Պահել վառ, ջահեր վառ, պահել
Ջահեր, պահել ջահեր,
Պահել ջահեր։

---



# ԿԱՐՄԻՐ ՀՈԿՏԵՄԲԵՐ

Խոսք՝ ՎԱԶԳԵՆ ԲԱԼՅԱՆԻ  Յերաժշտ. ԿԱՐՈ ԶԱՔԱՐՅԱՆԻ



Հէյ ջան, Հոկտեմբեր, կարմիր ու հաղթող,
Մեր մատաղ շարքերն ամուր են այսօր։
Մենք կպաշտպանենք քեզ, ջա՜ն Հոկտեմբեր,
Քո գովքը կանենք, կարմիր Հոկտեմբեր։

Դեհ առաջ, առաջ, կարմիր մանուկներ,
Դեհ, կանչենք անվախ՝ կեցցե՛ Հոկտեմբեր,
Դեհ, կանչենք անվախ՝ կեցցե՛ Հոկտեմբեր։

---

# ՇԱԽՏԵՐՈՒՄ

Խօսք՝ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

Երաժշտ. ԿԱՐՈ ԶԱՔԱՐՅԱՆԻ

Արագ




Գիշեր ու ցերեկ խոնավ շախտերում
Բլուրշներն անվերջ զարկում են, ղնգում,
Ու շախտյորները յերկաթամկան
Փայլուն պղինձը յերկիր են հանում։

Իջնում են թափով զարկերը հատու,
Ամեն մի զարկը մի նոր նվաճում,
Ամեն մի զարկը նոր ուղի հարթում,
Մեր հնգամյակին պղինձ է բերում։

Ճեղքել են քարե գոռ կուրծքը հողի
Բանվորները մեր յերկաթամկան,
Ու լեռան կրծքում շինել են ուղի,
Պղինձ են տանում դեպի ձուլարան։

---

# ՆՈՅԵՄԲԵՐԻՆ

Խօսք՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Երաժշտ. ԿԱՐՈ ԶԱՔԱՐՅԱՆԻ

Ուրախ




Նոյեմբերն եմ վառվռուն,
Նոյեմբերն եմ կարմրավուն,
Բանվորի կռան մուրճն եմ,
Գյուղացու մանգաղն եմ։

Հոկտեմբերի զավակն եմ,
Բանվորների պաշտպանն եմ,
Հիմք եմ դրել Հայաստանի
Խորհրդային կարգերի։

# ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ № 1

Խոսք՝ ԳՐԻԳՈՐ ԳԱՐՈՒՆՑԻ

Երաժշտ. ՀԱՅԿԱԶ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

*Քայլերգի տեմպով*



Շեփորի՛ր, շեփորի՛ր, շեփորի՛ր,
Թմբկահար թմբուկը զա՛րկ ուժգի՛ն,
Որ մեր այս վճռական օրերի,
Ընթացքը ամրանա և ուժգնի...

Լենինյան փարոսը մեր ճամբի
Ամեն մի կայանում թող շողա,
Որ կամքը պայքարում մեր կոփվի,
Մեր կամքը չիրերա, չդողա...

Ձեռքներս առողջ և առույգ են,
Աշխատում մարտեր կան վճռական.
Մեր սիրտը խնդությամբ թող զարկե,
Որ հաղթենք պայքարում վերջնական։



# ՊԻՈՆԵՐԻԱ

Երաժշտ. ՀԱՅԿԱԶ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

*Ուրախ, աշխույժ*



Երկիրը մեր արագ գնացք,
Պետք է հասնել, հասնել-անցնել.
Շինենք ռելսեր ամրագնաց
Չկարենան փչացնել...

Զավոդից հանք, հանքից զավոդ,
Կանչենք իրար սոցմրցման.
Ու կբացենք լայն առավոտ,
Սոցիալիզմի կառուցման։

# ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ № 2

Յերաժշտ. ՀԱՅԿԱԶ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Քայլերգի տեմպով




Կոմունիզմի հույսն ենք մենք,
Նոր կարգերի լույսն ենք մենք։
Քայլիր առաջ դու հաղթական,
Քայլիր, քայլիր, հին կարգերը թող դողան։

Մենք յերկիրը առել ենք.
Ալ կրակներ վառել ենք,
Քայլիր առաջ...

Մենք ուրախ ենք և զվարթ,
Մերն է հիմա ապագան.
Քայլիր առաջ:

---



# ՊԻՈՆԵՐԱԿԱՆ

Խոսք Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ

Յերաժշտ. Գ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻ




Մեծ հոկտեմբերի զավակն ենք արի,
Կարմիր օրերի, ազատ աշխարհի.
Նոր կյանք ենք հիմնում, նոր շենք ենք կերտում,
Մենք հիմք ենք դնում վառ ապագայի։

---

# ՀՆԳԱՄՅԱԿԻ ՔԱՅԼԵՐԳ

Խոսք՝ ԿԻԲԱՌԻ | Երաժշտ. ՎԱՐԴԱՆ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ

Քայլերգի տեմպով




Մեկ, յերկու, ձախ, աջ,
Մեկ, յերկու, ձախ, աջ,
Հնգամյակի արև,
Հնգամյակի ամառ,
Քանի մկաններ լարվել, կապել,
Քանի կամուրջ
Լույս ես վառել,
Արեգակներ անմար
Հնգամյակի համար։

Մեկ, յերկու, ձախ, աջ...
Մեկ, յերկու, ձախ, աջ...
Հնգամյակի արև,
Հնգամյակի ամառ,
Վառիր դեմքս կայտառ,
Յեվ հույզերս համառ,
Ամրացրիր դու արի,
Գիտներական բանակ,
Հնգամյակի համար։



# ԻՄ ՄԱՏՐՈՍ ՏՂԱ

Խոսք՝ ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑՈՒ | Երաժշտ. ԳՈՒՐԳԵՆ ՄԻՐԶՈՅԱՆԻ




Այսօր, նորից նոր մեր յերակներում
Խաղաց արյունը հորդ, հրանման,
Իմ ծանոթ ընկեր, ծփուն ծովերում
Կանգնել ես դու հաղթ պահակի նման։

Իմ մատրոս տղա,
Իմ սրտոտ տղա,
Կապույտ ծովերի
Փոթորկոտ տղա։

Թե լինի, մի օր, թշնամին դաժան
Յելնի ծովերից շատ ու տմարդի՝
Յես՝ գիտեմ, կտաս դու ազդանշան
Վերջին պայքարի ու վերջին մարտի։

Իմ մատրոս տղա,
Իմ սրտոտ տղա,
Կապույտ ծովերի
Փոթորկոտ տղա։

# Մ Ա Յ Ի Ս

Երաժշտ. ԳՈՒՐԳԵՆ ՄԻՐԶՈՅԱՆԻ




# Բ Ե Ր Ք Ի Յ Ե Ր Գ Ը

Խոսք՝ Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

Երաժշտ. ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Աշխույժ




Հէյ, մեր տոնն է բերքահավաք.
Բերքի տոնը մեր յերկրի,
Ջան, ջան, հեյ ջան,
Պիտի յերգենք՝ յերգով գովենք
Մրցականչը դաշտերի,
Ջանե, ջան, հէյ ջան:

371

# ՆՈՐԻՑ ԳԱՐՈՒՆ

Խոսք՝ ԱԼԱԶԱՆԻ                Յերաժշտ. ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Աշխույժ




Նորից գարուն ուրախ, նորից յերգ ու խնդում
Սովետական մեր աշխարհում արևոտն,
Աշխատանքի աշխույժ յերգն ե թնդում
Մեր հանդերում, մեր հանդերում։ } Կրկնել

Գործարաններ հուժկու, հաղթ ու նորակառույց,
Խորհրդային յերկաթ, տրակտոր, մեքենա,
Ջրանցքներ, ակոս ու ցանք վողջ գնդում ե
Մեր հանդերում, մեր հանդերում։ } Կրկնել

Նորից գարուն ուրախ, նորից յերգ ու խնդում,
Սովետական մեր աշխարհում արևոտն,
Աշխատանքի աշխույժ յերգն ե թնդում
Մեր աշխարհում, մեր աշխարհում։ } Կրկնել

ԳԻՆԸ 1 Ռ. 65 Կ.

Сборник Пионерских песень
ИЗ ССР Армении–Эри нь

ՀՀ Ազգային գրադարան
NL0467484